

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացնում եմք Ձեզ, որ Արմավիրի մարզի «Արաքսի միջնակարգ դպրոց»  
ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվում է նոր մրցույթ:  
Փաստաթղթերի ընդունումը 2022թ-ի հոկտեմբերի 17-ից մինչև 2022թ-ի  
նոյեմբերի 4-ը:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան  
նիստի №15 արձանագրությունից և հայտարարության տեքստը:  
Առդիր՝ 2 էջ :

Խորհրդի նախագահ՝  Կ. Մարգարյան

## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Արաքսի միջնակարգ դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց» «Հայկաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022թ. հոկտեմբերի 14-ի նիստի №15 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ հոկտեմբերի 14 - ին:  
Նիստին մասնակցում են խորհրդի 15 /տասնհինգ/ անդամները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Մարգարյան  
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. Հակոբյան

### ՕՐԱԿԱՐԳ

1. «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարվում է նոր մրցույթ:

/գեկ. խորհրդի նախագահ՝ Կ. Մարգարյան /

### ԼՍԵՑԻՆ՝

Կառավարման խորհրդի նախագահի գեկույցը «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար հայտարարվում է նոր մրցույթ: Փաստաթղթերի ընդունումը 2022թ-ի հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 4-ը, մրցույթի նշանակման օրը նոյեմբերի 18-ին:

### ՈՐՈՇԵՑԻՆ

1. Առաջնորդվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետին համապատասխան՝ ՀՀ կառավարության որոշման 2.1 և 2.2 կետերով:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Կ. Մարգարյան

# Մրցույթի հայտարարություն

## «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) <<Հանրակրթության մասին>> օրենքի 12րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

1. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ին, «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Արաքս, Դրոյի 6:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 093-14-47-41

Էլ. փոստ՝ [araqsimijnakarq.dproc@mail.ru](mailto:araqsimijnakarq.dproc@mail.ru):